«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 10
21.06.2022թ.

1. Համալսարանի ստորաբաժանումներում 2021-2022 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ընթացքի, ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ.

1.1. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին, իրավաբանական բաժնի պետ Մ. Վարդանյանին՝ հարցումով դիմել ՀՀ ԿԳՄՍՆ և տեղեկանալ քոլեջի անբավարար առաջադիմությամբ անչափահաս ուսանողներին նույն կուրսում թողնելու ու կուրսի կրկնության իրավական հիմքերը, քննարկել ու կայացնել համապատասխան որոշում:

1.2. Հանձնարարել Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի տնօրեն Վ. Վարդանյանին.

- բացատրական աշխատանքներ իրականացնել քոլեջի անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների հետ,
- մենեջմենթ (կառավարում) 1-ին կուրսի ուսանողուհի Քնարիկ Սամսոնի Սաֆարյանին, բացառության կարգով, թույլատրել հանձնելու առարկայական 8 պարտքերը (թվով յոթ տարբերակված ստուգարք և մեկ քննություն)՝ հաշվի առնելով ընտանեկան կարգավիճակը (հինգ անչափահաս երեխա ընտանիքում): Մաթեմատիկա առարկայի քննությանը թույլատրել միայն ուսման վարձավճարի 110000 ՀՀ դրամ պարտքը մարելուց հետո:

1.3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին և բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ պատերազմի մասնակից ուսանողներին աջակցելու և ուսումնական գործընթացին ինտեգրելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:

1.4. Հանձնարարել ՀՈՒԴ պետ Հ. Հարությունյանին՝ սեղմ ժամկետում ռեկտորին և գլխավոր հաշվապահին ներկայացնել ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողների ցուցակները:

2. 2022-2023թթ ուս. տարվա ուսումնական ծանրաբեռնվածության կազմման ընթացքի վերաբերյալ.

2.1. Հանձնարարել դեկաններին մեկ շաբաթյա ժամկետում ամփոփել ստորաբաժանման ուսումնական ծանրաբեռնվածությունը և ներկայացնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին:

2.2. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ 2022-2023 ուս. տարվա դասախոսական անձնակազմի ընտրության և հաստիքների բաշխման ժամանակ սահմանել առողջ մրցակցության հստակ չափանիշներ, գործընթացն իրականացնել թափանցիկ, օբյեկտիվ, հրապարակային՝ բարձրաձայնելով առավել ժամեր ստացած դասախոսների ձեռքբերումները 2021-2022 ուս. տարվա ընթացքում:

3. Համալսարանի էլեկտրոնային տեղեկագրերում գնահատականներ մուտքագրելու հետ կապված խնդիրների, սահմանված ժամկետներից շեղումների դեպքերի ու դրանց պատճառների վերաբերյալ.

3.1 Հանձնարարել SS կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին՝ ռեկտորատի նիստի ընթացքում ներկայացված էլեկտրոնային տեղեկագրերում ինքնուրույն աշխատանքի և ընթացիկ ստուգումների սյունակների բացթողումներով առարկաների ցուցակները տրամադրել դեկաններին:

3.2. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին.

- սեղմ ժամկետում պարզել էլեկտրոնային տեղեկագրերում ինքնուրույն աշխատանքի և ընթացիկ ստուգումների տվյալների մուտքագրման բացթողումների պատճառները, անհրաժեշտության դեպքում լրացնել ի օգուտ ուսանողների, իսկ ամբիոնի վարիչներին հայտարարել նկատողություն,

- Սահմանել ինքնուրույն աշխատանքների պաշտպանության հստակ ժամկետներ և խստորեն վերահսկել կանոնակարգերով սահմանված վերջնաժամկետների պահպանումը:

4. Բացակայությունների 50%-ի շեմն անցած ուսանողներին բացակայությունների լրացման արտահերթ հնարավորություն ընձեռելու հարցի վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ կրեդիտային պարտքեր ունեցող ուսանողների դիմումի համաձայն, քննաշրջանի ավարտից մեկ շաբաթ առաջ մինչև հաջորդ կիսամյակի մեկնարկը պատշաճ կերպով կազմակերպել կրեդիտային պարտքերի կուրսի կրկնության դասընթացներ:

5. ՀԱԱՀ 2022-2023 ուս տարվա մեկ կրեդիտին համապատասխանող ուսման վարձավճարի չափի սահմանման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ 2022-2023 ուս տարվա մեկ կրեդիտին համապատասխանող ուսման վարձավճարի չափը ըստ կրթական մակարդակների, մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և կուրսերի:

6. Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջից ուսանողների հեռացման կանոնակարգի մշակման անհրաժեշտության վերաբերյալ.

Հանձնարարել Քոչինյանի անվան գ/տ քոլեջի տնօրեն Վ. Վարդանյանին սեղմ ժամկետում կազմել քոլեջից ուսանողների հեռացման կանոնակարգի նախագիծ և ներկայացնել քննարկման:

7. Ա. Քոչինյանի անվան գ/տ քոլեջի հանրակրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայման և մասնագիտական որոշ առարկաների ներառման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ քոլեջների հանրակրթական ծրագրերի ուս. պլաններում փոփոխություններ կատարելու, դուալ կրթական ծրագրերի ուս. պլանների վերանայման հարցը քննարկել

միջազգային կապերի և կրթական բարեփոխումների աշխատանքների գծով պրոռեկտոր Մ. Մովսիսյանի հետ:

8. ՀԱԱՀ ռեկտորատի 2021թ-ի սեպտեմբերի 28-ի թիվ 1 նիստի որոշման մեջ փոփոխություն մտցնելու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց ի մասնակի փոփոխություն ՀԱԱՀ ռեկտորատի 2021թ սեպտեմբերի 28-ի թիվ 1 որոշման, «041801.00.6 Ագրոբիզնես» մասնագիտության «041801.01.6 Ագրոբիզնես» կրթական ծրագրից Ագրոբիզնեսի դեպարտամենտի կողմից անգլերենով իրականացվող «041801.00.6 Ագրոբիզնես» մասնագիտության **«041801.04.06 Ագրոբիզնես և ֆինանսներ»** կրթական ծրագիր տեղափոխման հայտ ներկայացրած և շրջափոխման արդյունքում անվճար համակարգ անցած ուսանողներին թույլատրել ուսումը 3-րդ կուրսում իրականացնել անվճար հիմունքներով, ինչպես նաև երաշխավորեց իրավաբանական բաժնին այդ որոշումն ամրագրել շրջափոխման կարգում:

9. Ագրոբիզնեսի դեպարտամենտի վթարի ենթարկված ուսանող Վոլոդյա Գագիկի Ալեքսանյանին տարեկետում ձևակերպելու վերաբերյալ.

9.1. Ագրոբիզնեսի դեպարտամենտի ուսանող Վոլոդյա Գագիկի Ալեքսանյանի հիվանդության պատմությունն ու առողջական վիճակի վերաբերյալ բուժ հաստատությունից տրված փաստաթղթերը պահանջել և պարզել դրանց հիման վրա տարեկետում ձևակերպելու հնարավորությունը:

9.2. Հանձնարարել ՈՒԳԿՎ պետ Ա. Աղասարյանին և ստորաբաժանումների ղեկավարներին կազմել օրենքների, կանոնակարգերի խնդրահարույց դրույթների փոփոխության, իրավական խոչընդոտների վերացման առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ:

10. Ագրոճամբարի աշխատանքների մեկնարկի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

11. ՀԱԱՀ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղի կողմից շահած դրամաշնորհային նոր ծրագրի վերաբերյալ.

Ընդունել ի գիտություն:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ